ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinhamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<16>> դեկտեմբերի 2025 թվական N 193-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Թալին համայնքում սկսել 2026 թ-ի «Մասնակցային բյուջետավորման» գործընթացը:
2. Թալին համայնքի 2026 թ-ի բյուջեում հատկացնել 15 000 000 ՀՀ դրամ գումար՝ 2026 թ-ի ընթացքում «Մասնակցային բյուջետավորման» գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 60 000 000 ՀՀ դրամ:
4. Սահմանել «Մասնակցային բյուջետավորման» առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթող:
6. «Մասնակցային բյուջետավորման» գործընթացի իրականացման համար սահմանել կապիտալ շինարարության ոլորտը որպես առաջնահերթություն:
7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026 թ-ի ՄԺՍՍ-ում, Տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հաստատմանը

3) իրականացնել վերահսկողություն «Մասնակցային բյուջետավորման» գործընթացի նկատմամբ

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 23	Դեմ-0	Ձեռնպահ-2
1.Բաբկեն Պողոսյան		1.Դավիթ Մանուկյան
2.Արման Կարապետյան		2.Գագիկ Ավետիսյան
3.Սարգիս Գրիգորյան		
4.Սնակ Սիմոնյան		

5.Գեղամ Ղազարյան

6.Սերգե Մկրտչյան

7.Միեր Մարգարյան

8.Ավետիս Մինասյան

9.Հարություն Կարապետյան

10.Էմին Մկրտչյան

11.Արմեն Ծառուկյան

12.Նելլի Մարգարյան

13.Գեղամ Մարգսյան

14.Նարեկ Գրիգորյան

15.Արմեն Գրիգորյան

16.Կարեն Գրիգորյան

17.Վահե Եղիազարյան

18.Գևորգ Սահակյան

19.Մնացական Մնացականյան

20.Գագիկ Նիկոյան

21.Անի Միկոյան

22.Սարգիս Մուրադյան

23.Հայկ Սահարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՎՐՈՍ ՍԱՖԵՅԱՆ

ք. Թալին
16 դեկտեմբերի 2025թ.

Հաստատված է
Թալին համայնքի ավագանու
« 16 » դեկտեմբերի N 193-Ա որոշմամբ

ԱՂՅՈՒՍԱԿ
ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՑԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է հանրային քննարկումների և լսումների փուլ
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն[1]	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխանում է ավագանու սահմանած առաջնահերթություններին	
1		Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
2								
3								

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆ

[1] Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականացվելու այլ կազմակերպությունների կողմից: